ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ - ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2008 թվականի մայիսի 4-ի N 225-Ա որոշման դրույթներով ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմում քննարկվել են ՀՀ վերահսկիչ պալատի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում 2016 թվականին կատարված վերահսկողության արդյունքում արձանագրված խախտումները:

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում 2016 թվականին արձանագրված խախտումների հիմնական պատճառն են հանդիսացել ,,Նորք'' տեղեկատվավերլուծական կենտրոնի կողմից հարակից բազաների տեղեկություններն ողջամիտ ժամկետում չտրամադրելը, որոշ ընտանիքների ոչ ճիշտ հասցեականությունը ներկայացնելը, քաղաքացիների կողմից եկամուտների թաքցնելը, ավտոմեքենայի և անշարժ գույքի ձեռք բերումը:

Անհետաձգելի լուծում պահանջող իրավիճակներում հրատապ օգնություն նշանակելու համար մարզի սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում աշխատանքներ են կատարվում ,,0''-ից բարձր անապահովության միավոր ունեցող ոչ նպաստառու ընտանիքների կազմվող գործերում ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145 որոշման 8-րդ հավելվածով նախատեսված հիմքերի առկայությունը ապահովելու համար:

Մարզի սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում արձանագրվել է 25.369.500 ՀՀ դրամ հետգանձման ենթակա գումար, որից համակարգող խորհրդի միջոցով մարվել է 8.741.500 ՀՀ դրամ, ըստ կազմված ժամանակացույցի հետ է գանձվել 11.117.800 ՀՀ դրամ, մնացել է հետգանձման ենթակա 5.510.200 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով ՀՀ վերահսկիչ պալատի կողմից ներկայացված առաջարկությունները՝ համապատասխան միջոցներ են ձեռնարկվել վերահսկողության արդյունքներով արձանագրված խախտումները վերացնելու և հետագայում դրանք բացառելու ուղղությամբ, ինչպես նաև ՀՀ վարչապետի 2008 թվականի մայիսի 4-ի N 225-Ա որոշման դրույթների համաձայն անհրաժեշտ փաստաթղթերը տեղադրվել են ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կայք էջում:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների աշխատակիցները ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով ոչ պատշաճ կատարելու համար ենթարկվել են կարգապահական տույժերի, իսկ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի և Մարտունու սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների պետերն ազատվել են զբաղեցրած պաշտոններից: